

ԿԱՆԹԵՂ

ՄՈՆՏՐԵԱԼԻ ՍՈՒՐԵ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԲՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ԵԿԵՂԵՅԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ

GANTEGH

BULLETIN DU DIMANCHE
DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE
ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTRÉAL



GANTEGH

SUNDAY BULLETIN OF
ST. GREGORY THE ILLUMINATOR
ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL


WWW.SAINTGREGORY.CA

ԿԻՐԱԿԻ, 10 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2017

**Ե ԿԻՐԱԿԻ ԶԿՆԻ ՎԻՐԱՓՈՒՄԱՆ
/ԹԻԻ 23**

**SUNDAY, September 10, 2017
5th SUNDAY OF THE FEAST OF
ASSUMPTION – N0/23**

TODAY'S BIBLE READINGS



2 Corinthians 7:4-16 | Mark 7:31-37 |

Պատարագիչ՝

ԱՐԺ. Տ. ԵՂԻԱ Ա. ՔՂՆՅ. ՔԵՐՎԱՆՃԵԱՆ

Հոգևոր Հովիվ

Celebrant:

REV. ARCH. FR. YEGHIA KERVANJYAN

Pastor

**Deacons: Dn. Minas Asaduryan, Dn. Arto Sivacyan, Dn. Vahan Shakaryan,
Dn. Raffi Arabian, Dn. Norayr Grigoryan**

Acolytes: Michael Arabian, Armen Bajakian, Shiraz Sivadjan

Choirmaster: Miss Lori Antounian


Organist: Mr. Karen Manucharyan

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

secretary@saintgregory.ca | www.saintgregory.ca

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS

2 ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐՈՒՆ 7:4-16

4Մեծ է խօսքի համարձակությունս ձեզի հանդեպ, մեծ է ձեզմով պարծանքս, լեցուած եմ մխիթարութեամբ, չափազանց ուրախ եմ մեր ամբողջ տառապանքին մէջ:

5Որովհետեւ՝ երբ մենք Մակեդոնիա հասանք՝ մեր մարմինը բնա՛ւ անդորրութիւն չունեցաւ, այլ ամէն կողմէ կը տառապէինք. դուրսէն կռիւներ կային, իսկ ներսէն՝ վախեր: **6**Բայց Աստուած, որ խոնարհները կը մխիթարէ, մեզ մխիթարեց Տիտոսի գալուստով: **7**Եւ ո՛չ միայն անոր գալուստով, այլ նաեւ այն մխիթարութեամբ՝ որով ինք մխիթարուած էր ձեզմով, երբ պատմեց մեզի ձեր տենչանքը, ձեր կոծը, ինծի հանդեպ ձեր ունեցած նախանձախնդրութիւնը, այնպէս որ ա՛յլ աւելի ուրախացայ:

8Որովհետեւ, թէպէտ տրտմեցուցի ձեզ այդ նամակով, չեմ գղջար, (թէպէտ գղջացեր էի,) քանի որ կը նշմարեմ թէ այդ նամակը տրտմեցուց ձեզ, թէպէտ միայն ժամանակ մը:

9Ուրեմն կ'ուրախանամ, ո՛չ թէ քանի որ տրտմեցաք, հապա՛ որովհետեւ տրտմեցաք ապաշխարութեա՛ն համար. քանի որ տրտմեցաք Աստուծոյ ուզած կերպով, որպէսզի ոչինչ կորսնցուցած ըլլաք մեր միջոցով: **10**Արդարեւ Աստուծոյ ուզած տրտմութիւնը կը պատճառէ՝ ապաշխարութիւն՝ փրկութեան համար, որ չի գղջացներ. բայց աշխարհի տրտմութիւնը կը պատճառէ մահ: **11**Քանի դուք փութաջանութիւն գոյացուց, նոյնիսկ ջատագովութիւն, ընդվզում, վախ, տենչանք, նախանձախնդրութիւն, վրէժխնդրութիւն. ամէն կերպով դուք ձեզի հաւանութիւն տուիք թէ այդ խնդիրին մէջ անկեղծ էք:

12Ուրեմն ինչ որ գրեցի ձեզի, ո՛չ թէ անիրաւութիւնը ընողին պատճառով էր, եւ ո՛չ ալ անիրաւութիւնը կրողին պատճառով, հապա՛ որպէսզի երեւնայ ձեզի Աստուծոյ առջեւ մեր ունեցած փութաջանութիւնը ձեզի հանդեպ: **13**Ուստի ձեր մխիթարութեամբ մե՛նք մխիթարուեցանք. եւ ա՛յլ աւելի ուրախացանք Տիտոսի ուրախութեան համար, որովհետեւ անոր հոգին հանգստացած էր բոլորէր.

14քանի որ ամօթահար չեմ ըլլար՝ ձեզմով որեւէ քանի մէջ պարծենալուս համար անոր առջեւ. հապա, ինչպէս ամէն բան ճշմարտութեամբ խօսեցանք ձեզի, նոյնպէս Տիտոսի առջեւ մեր պարծանքն ալ ճշմարիտ գտնուեցաւ: **15**Նաեւ իր գորովը աւելի առատ է ձեզի հանդեպ, մինչ կը վերյիշէ ձեր բոլորին հնազանդութիւնը, թէ ի՛նչպէս ահով ու դողով ընդունեցիք զինք:

16Ուստի կ'ուրախանամ որ ամէն քանի մէջ վստահութիւն ունիմ ձեր վրայ:

ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 7:31-37

31Դարձեալ Տիւրոսի եւ Սիդոնի հողամասերէն մեկնելով՝ գնաց Քալիլեայի ծովեզերքը, Դեկապոլիսի հողամասին մեջէն: **32**Մեկը բերին անոր առջեւ, խուլ ու դժուարախօս, եւ կ'աղաչէին՝ որ ձեռք դնէ անոր վրայ: **33**Բազմութենէն մեկդի առնելով զայն՝ իր մատները մխեց անոր ականջներուն մէջ ու թքնեց, եւ դպաւ անոր լեզուին. **34**ապա երկինք նայելով՝ հառաչեց ու ըսաւ անոր. «Եփփաթա՛», (որ ըսել է՝ բացուէ՛.) **35**Իսկոյն բացուեցան անոր ականջները եւ քակուեցաւ անոր լեզուին կապը, ու շիտակ կը խօսէր: **36**Պատուիրեց անոնց՝ որ ո՛չ մեկուն ըսեն. սակայն ինք ո՛րքան կը պատուիրէր անոնց, անոնք ա՛լ աւելի կը հրապարակէին: **37**Չափազանց կ'ապշէին ու կ'ըսէին. «Ան ամեն ինչ լաւ կ'ընէ. խուլներուն լսել կու տայ, եւ համրերուն՝ խօսիլ»:

տրտմեցաք Աստուծոյ ուզած կերպով, ահա՛ այդ բանը ձեր մէջ ի՛նչ

2 Corinthians 7:4-16

4 Great is my boldness of speech toward you, great is my glorying of you: I am filled with comfort, I am exceeding joyful in all our tribulation. **5** For, when we were come into Macedonia, our flesh had no rest, but we were troubled on every side; without were fightings, within were fears. **6** Nevertheless God, that comforteth those that are cast down, comforted us by the coming of Titus; **7** And not by his coming only, but by the consolation wherewith he was comforted in you, when he told us your earnest desire, your mourning, your fervent mind toward me; so that I rejoiced the more. **8** For though I made you sorry with a letter, I do not repent, though I did repent: for I perceive that the same epistle hath made you sorry, though it were but for a season. **9** Now I rejoyce, not that ye were made sorry, but that ye sorrowed to repentance: for ye were made sorry after a godly manner, that ye might receive damage by us in nothing. **10** For godly sorrow worketh repentance to salvation not to be repented of: but the sorrow of the world worketh death. **11** For behold this selfsame thing, that ye sorrowed after a godly sort, what carefulness it wrought in you, yea, what clearing of yourselves, yea, what indignation, yea, what fear, yea, what vehement desire, yea, what zeal, yea, what revenge! In all things ye have approved yourselves to be clear in this matter.

¹² Wherefore, though I wrote unto you, I did it not for his cause that had done the wrong, nor for his cause that suffered wrong, but that our care for you in the sight of God might appear unto you. ¹³ Therefore we were comforted in your comfort: yea, and exceedingly the more joyed we for the joy of Titus, because his spirit was refreshed by you all. ¹⁴ For if I have boasted any thing to him of you, I am not ashamed; but as we spake all things to you in truth, even so our boasting, which I made before Titus, is found a truth. ¹⁵ And his inward affection is more abundant toward you, whilst he remembereth the obedience of you all, how with fear and trembling ye received him. ¹⁶ I rejoyce therefore that I have confidence in you in all things.

Mark 7:31-37

³¹ And again, departing from the coasts of Tyre and Sidon, he came unto the sea of Galilee, through the midst of the coasts of Decapolis. ³² And they bring unto him one that was deaf, and had an impediment in his speech; and they beseech him to put his hand upon him. ³³ And he took him aside from the multitude, and put his fingers into his ears, and he spit, and touched his tongue; ³⁴ And looking up to heaven, he sighed, and saith unto him, Ephphatha, that is, Be opened.

³⁵ And straightway his ears were opened, and the string of his tongue was loosed, and he spake plain. ³⁶ And he charged them that they should tell no man: but the more he charged them, so much the more a great deal they published it; ³⁷ And were beyond measure astonished, saying, He hath done all things well: he maketh both the deaf to hear, and the dumb to speak.



Բարեկենդան խաչվերացի

ԽԱՉՎԵՐԱՑԻ ԲԱՐԵՎԵՆԴԱՆ Է այսօր եւ մայրամուտին կը սկսինք պատրաստուիլ 2017-ի վերջին տօսին՝ պահեցողութեամբ եւ այլ հոգեւոր վարժութիւններով: Պահեցողութիւնը հոգեպէս օգտակար չէ, եթէ չընկերանայ ապաշխարութեան: Ամէն քրիստոնեայ ամէն առիթ պէտք է օգտագործէ իր ապաշխարութիւնը վերանորոգելու համար:



Մեղաւորը պարզապէս եթէ հաւատքի գայ, կրնայ փրկուիլ Աստուծոյ շնորհքովը, քանի որ հոգիի փրկութիւնը Աստուծոյ սիրոյն պարգեւն է բոլորիս: Ձրի, բոլորովին անվճար պարգեւ մը: Սիրելի հաւատացեալներ, Յիսուս այս կիրակի օրուայ անետարանի հատուածին մէջ իր ձրի պարգեւները կը բաժնէ խուլ եւ համր մարդը բուժելով:

Մեր ունեցած մարմինները, հոգին եւ միտքը, Աստուծոյ կողմէ մեզի տրուած պարգեւներ են: Բայց ոչ միայն մեր մարմինները Աստուծոյ կողմէ մեզի տրուած պարգեւներ են, այլեւ՝ մեր մարմիններուն անդամներէն իւրաքանչիւրը: Ի՞նչպէս կրնանք մեր աչքը աստուածային պարգեւ չհամարել, երբ անով կրնանք վայելել գեղեցկութիւնը երկինքին, եւ անոր միջոցաւ դառնալ ականատես վկաները աստուածային փառքին ու մեծութեան: Ի՞նչպէս կրնանք մեր ականջներուն լսողական կարողութիւնը աստուածային պարգեւ չհամարել, երբ անով կրնանք լսել Աստուծոյ խօսքին քարոզութիւնը, սուրբ Պատարագի երգեցողութիւնը, հոգեւոր երգերն ու շարականները, փառաբանական ու օրհներգական աղօթքները: Ի՞նչպէս կրնանք մեր բերաններն ու լեզուները աստուածային պարգեւներ չհամարել, երբ անոնցմով մենք կարողութիւնը ունինք պատմելու Տիրոջ սիրոյն ու քաղցրութեան մասին, Տիրոջ փրկագործութեան ու ողորմութեան մասին: Աւետարանի մէջի Յիշեալ հիւանդ մարդը չէ՛ր կրնար պատմել Աստուծոյ փառքին մասին, չէ՛ր կրնար բարձրաձայն աղօթել ու բարեխօսել, չէ՛ր կրնար բարի խրատներ ու յորդորներ տալ: Տակաւին, ան խուլ ու համր ըլլալով, ո՛չ կրնար մխիթարական խօսք մը լսել եւ ո՛չ ալ կրնար մխիթարական խօսք մը ըսել, ո՛չ կրնար քաջալերել եւ ո՛չ ալ կրնար քաջալերուիլ, ո՛չ կրնար մարդոց խօսակցութիւնները լսել եւ ո՛չ ալ կրնար անոնց խօսակցութիւններուն մասնակցիլ: Մենք, ականջի լսողութիւն եւ աչքի տեսողութիւն ունեցողներս կրնանք այս բոլորը ընել, ուստի շնորհակալ ըլլանք Աստուծոյ, եւ մեր շնորհակալութիւնը գործնականօրէն արտայայտենք՝ մեր մարմիններուն անդամները Աստուծոյ փառքին համար գործածելով:

«Մարդիկ ծայր աստիճան կը զարմանային եւ կ'ըսէին.-"Այս մարդը ամէն ինչ լաւ կը կատարէ. Նոյնիսկ խուլերուն լսել կու տայ եւ համբերուն՝ խօսիլ"» (Մր 7.37):

Պատահածին համար մարդոց զարմանքը չափ ու սահման չունէր: Մա կը պարզէ որ Տիրոջ գործերը խիստ զարմանալի են: Ո՛չ միայն Տիրոջ գործերը զարմանալի են, այլեւ, զարմանալի են անոր սէրն ու բարութիւնը, համբերութիւնն ու ազնուութիւնը, քաղցրութիւնն ու գթութիւնը:


Մարդիկ իրենց զարմացումին մէջ, վկայութիւն տուին Յիսուսի համար եւ ըսին. «Այս մարդը ամէն ինչ լաւ կը կատարէ»: Մենք ալ կրնա՞նք նոյն վկայութիւնը տալ Յիսուսի մասին: Կրնա՞նք համարձակօրէն ըսել, թէ Յիսուս «ամէն ինչ լաւ կը կատարէ» մեր կեանքին մէջ: Կրնա՞նք հանգիստ խիղճով եւ առանց մենք զմեզ խաբելու յայտարարել թէ ինչ որ կ'ընէ Յիսուս՝ լաւ է, ինչ որ կը խօսի՝ շիտակ է, ինչ որ կը գործէ՝ կատարեալ է: Մենք կրնանք շատ բան չհասկնալ Տիրոջ գործերուն կամ գործելակերպին վերաբերեալ, բայց պէտք է վստահ ըլլանք ու գիտնանք, թէ իր գործերն ու գործելակերպը ամենէն շիտակն են: Տէրը մեզմէ չ'ակնկալէր որ հասկնանք իր գործերը, բայց կ'ակնկալէ որ հաւատանք իր գործերուն, իր սիրոյն, իր քաղցրութեան, իր ողորմութեան, իր գթութեան:

Տ. Եղիա Ա. Քհնյ. Քերվանճեան



7 Սեպտեմբեր 2017

Ս. Աբրահամի եւ Խորենի, Կոզմայի եւ Դամիանոսի յիշատակութեան օր



Ս. Աբրահամը եւ Խորենը

Ղեւնդեանց աշակերտներն են: Իրենց ուսուցիչներու նահատակութենէն յետոյ կ'աքսորուին Ասորեստան: Շրջակայքի քրիստոնեաներու կողմէ յարգանքի կ'արժանան իբրեւ կենդանի խոստովանողներ: Ս. Խորենը չի դիմանար զրկանքներուն եւ կը մահանայ աքսորավայրին մէջ, իսկ Ս. Աբրահամը կը վերադառնայ Յայաստան՝ դառնալով Բզնունիքի եպիսկոպոսը՝ խաղաղ մահուամբ աւարտելով իր կեանքը:

Ս. Կոզման եւ Դամիանոսը, նաեւ ուրշներ՝ «անարձաթ բժիշկներ» անուանուած են, ծնած եւ ապրած են երրորդ դարու վերջերուն, Արաբիայի մէջ: Դաստիարակուած են իրենց առաքինի մօր կողմէն եւ անոր հորդորով իրենց բժշկական գիտելիքները օգտագործած են՝ տեղէ տեղ շրջելով եւ ճրիաբար բուժելով հիւանդներուն: Դիոկղետիանոսեան հալածանքներու օրերուն քրիստոնեայ եղբայրները ձերբակալուած են, չարչարուած, ապա նահատակութեան պսակը ընդունած՝ գլխատուելով 285 թուականին:

Ս. Աստուածատուրը կը նահատակուի պարսիկներու խոսրով արքայի ժամանակ: Ան պարսիկներու մոգ էր, որ Դենշապուհի հետ կու գայ Յայաստան ու այստեղ տեսնելով Ս. Գրիգորիս Ռաժիկի նահատակութիւնը՝ կը հաւատայ Քրիստոսին եւ կը մկրտուի: Ան կը նահատակուի պարսիկներու կողմէ՝ թաղուելով Դուլինի՝ Ներսէս Բ կաթողիկոսի ձեռքով:



8 Սեպտեմբեր 2017

Ս. Կոյս Մարիամի ծնունդը Աննայեն

Ս. Աստուածածնի ծնունդը նկարագրուած չէ Աստուածաշունչ մատեանին մէջ, այն մեզի փոխանցուած է Եկեղեցւոյ սրբազան աւանդութեամբ: Կոյսին ծնողները՝ Յովակիմն ու Աննան երկար ժամանակ երեխայ չէին ունենար, քանի որ վերջինս ամուլ էր: Եւ օր մը, երբ Աննան կ'իջնէ պարտեզ՝ աղօթելու, յանկարծ կը յայտնուի Տիրոջ հրեշտակը եւ կ'աւետէ, որ զաւակ ունենալու է, որուն երանի պիտի տան բոլոր ազգերը: Աննան գոհութիւն կը յայտնէ Աստուծոյ, որ լսեց իր անդադրում աղօթքները եւ խղճաց իրեն: Ան կը խոստանայ իր զաւակին Աստուծոյ նուիրել: Նոյն այս տեսիլքը կ'երեւայ նաեւ Յովակիմին՝ յայտնելով բարի լուրը: Ս. Կոյսին հայրը նոյնպէս փառք կու տայ Բարձրեալին այդ մեծ շնորհքին արժանանալուն համար: Աննան կը յղիանայ, կ'ունենայ աղջիկ մը, որուն կ'անուանեն Մարիամ, այսինքն՝ լուսաւորեալ: Ան էր այն ընտրեալը, որուն Աստուած իր առաքինութիւններուն ու առժանիքներուն շնորհիւ պատուեց ըլլալ Աստուծոյ մայրը: Ս. Կոյսը տառապեցաւ իր Որդիին համար, սակայն երբեք չերկնչեցաւ ու չընդդիմացաւ Աստուծոյն՝ քաջ գիտակցելով Բարձրեալին իրեն վստահուած առաքելութեան կարեւորութիւնը: Ան առաքինի, հաւատաւոր մօր, ընտանեկան սրբութեան պահապանի մարմնացումն է: Հայ Եկեղեցին Աստուածամօր ծննդեան տօնը հաստատուն կերպով կը տօնէ Սեպտեմբեր 8-ին:



September 08, 2017

Birth of St. Mary from Anna

The birth of the Holy Mother of God is not described in the Holy Bible. We learn about from the Holy Tradition of the Church. Parents of the Holy Virgin, Jehoiakim and Anna did not have children for many years. Once, when Anna goes to the garden to pray, suddenly God's Angel appears to her and tells her that she will have a baby. Anna thanks God for hearing her prayers and promises to present her baby to God. Jehoiakim also has the same vision. He also renders glory to God for deserving him that grace and offers sacrifice. Anna gives birth to a girl, who is named Mary, which means "Illuminated". It was she whom God

granted the grace to be the Mother of God. As mother she worried, suffered for her Son, but never opposed to God very well understanding the importance of the mission entrusted to her by God.



9 Սեպտեմբեր 2017

Նիկիայի սուրբ ժողովին 318 Հայրապետներու յիշատակութեան օր

Քրիստոսի Եկեղեցւոյ պատմութեան մէջ առաջին Տիեզերական ժողովը տեղի ունեցած է 325 թուականին, Կոստանդիանոս Մեծ կայսեր հրամանով, Կ. Պոլիսի մօտ գտնուող Նիկիայ քաղաքին մէջ: Ժողովին կը մասնակցէին Ընդհանրական Եկեղեցւոյ 318 նշանաւոր հայրապետներ: Տիեզերաժողովին գումարման շարժառիթը Ալեքսանդրիայի Արիոս անունով երեցն էր, որ կը քարոզէր, Էէ Քրիստոս անսկիզբ չէ, այլ ստեղծուած է ժամանակներէն ու դարերէն առաջ Հայր Աստծուծոյ ցանկութեամբ, որպէսզի անոր միջոցով կատարուի արարչագործութիւնը: «Միակ անձնունդը, միակ յաւիտենականը, միակ անսկիզբը Հայր Աստուած է: Որդին յառաջացած է ոչ թէ Հօր Էութենէն, այլ ոչնչութենէն: Կար ժամանակ, երբ Որդին չկար: Որդին թէւ ստացած է Հայր Աստծուծոյ ողջ շնորհքը եւ որդեգրուած, սակայն անապական չէ, ինչպէս Հայրը, այլ այլայլելի, ինչպէս արարածները», - Արիոսի այս դատողութիւններուն պատճառով փաստօրէն կը մերժուէր Քրիստոսի Աստուածութիւնը՝ վտանգի տակ դնելով ողջ քրիստոնէական վարդապետութիւնը: Արիոսականութեան դէմ դուրս կու գայ Ալեքսանդրիայի Ալեքսանտր արքեպիսկոպոսը: Ան իր քարոզներուն մէջ կը շեշտէր, որ յաւիտենական է Աստուած, յաւիտենական է եւ Որդին, Հայրը եւ Որդին միաժամանակ գոյութիւն ունին: Հայրը Որդիին չի նախորդէր ոչ մէկ ատեն, միշտ եղած է Հայրը, միշտ եղած է Որդին: Այս Տիեզերաժողովին կը դատապարտուի Արիոսի մոլորութիւնը՝ յայտարարելով այն հերետիկոսութիւն: Նիկիայի Ա Տիեզերաժողովին կը մասնակցէր նաեւ՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչի որդին՝ Արիստակէսը: Ժողովին ընդունած դաւանաբանական բանաձեւը, որ յայտնի է Նիկիական հանգանակ անունով, Ս. Արիստակէս Հայրապետը Հայաստան բերած եւ ներկայացուցած է հօրը՝ Ս Գրիգոր Լուսաւորիչին: Վերջինս ալ անոր ակեցուցած է «Իսկ մէք փառաւորեսցուք... » հատուածը: Նիկիայի ընդունուած Հաւատոյ հանգանակը եւ Լուսաւորիչի ակեցուցած հատուածը մինչեւ այսօր ալ անփոփոխ կ'օգտագործուին Հայ Եկեղեցւոյ ծիսակարգին մէջ: Արիստակէսը իր հետ Հայաստան բերած էր նաեւ՝ Նիկիայի ժողովին ընդունած 20 կանոնները, որոնք նոյնպէս հաստատուած են Ս. Գրիգոր Լուսաւորիչի կողմէն:

Commemoration of 318 Pontiffs participating in the Ecumenical Council of Nicaea

This council is the First Ecumenical Council in the history of the Church, which was convened upon the order of the King Costandianos the Great in the town Nicaea near Constantinople, in 327 A. D. 318 prominent pontiffs representing the Universal Church participated in the Council. The reason for convening the


council was priest Arios of Alexandria, who preached that Christ was not without beginning, that he was created upon the Will of God before times and centuries, in order the creation of God to be realized by means of Christ. The only one not having birth, the only one eternal and without beginning is God the father. Son has been created not from the essence of the Father, but from nothing. There was a time when the Son did not exist. Although the Son has received all the virtues of the Father and is adopted, he is not pure as the Father is, he is changeable, as all human beings.

Because of such viewpoints of Arios the Divinity of Christ was denied and the entire Christian doctrine was endangered. Archbishop Alexander of Alexandria opposed to Arianism. In his sermons he stressed that God is eternal, and Son is eternal, Father and Son are of the same time. Father does not precede the Son even for a moment, Father has always existed and Son has always existed. The false teaching of Arios is condemned during the first Ecumenical Council and it is declared to be heresy.

Aristakes, son of St. Gregory the Illuminator, also participates in the first Ecumenical Council. The doctrinal formulation adopted by the Council, which is known as Nicene Creed, is brought to Armenia by Aristakes and is presented to St. Gregory the Illuminator. The latter added to it the following passage: "As for us, we shall glorify him who was before the ages, worshipping the Holy Trinity and the one Godhead, the Father and the Son and the Holy Spirit, now and always and unto ages of ages. Amen.

The Nicene Creed, adopted in Nicaea, and the passage added by St. Gregory the Illuminator, are up to date used in the rites of the Armenian Apostolic Church without any change. Aristakes brings to Armenia also 20 canons adopted by the Council of Nicaea, which are also ratified by St. Gregory the Illuminator.





ANGELS The Church venerates not only saints but also the angels. The Armenian Church celebrates the feast of the Holy Archangels, St. Gabriel and St. Michael, and of all the Heavenly Hosts. The Christian Church believes in the existence of spiritual beings, called angels. This belief is biblical, and is confirmed by both the Old Testament and the New Testament. There are many passages in the Bible about angels. The angels conversed with prophets. They served as guides

to the servants of God. It was an angel who announced the birth of St. John the Baptist. Angels gave the good news of the Birth of the Saviour to the shepherds. They sang the first Christian hymn, "Glory to God in the highest" (Luke 2: 14). Our Lord often spoke about angels. They were the first and joyous witnesses of His glorious Resurrection. Angels are spiritual beings created by God at the beginning of the creation of the world. They are gifted, like men, with intelligence and free will, but they are distinctly different from men in the fact that they do not possess physical bodies. They are by nature invisible to men, but they can manifest themselves, if God so wills, in assumed or apparent bodies. The word Angel is a Greek word meaning "messenger." The Armenian word for Angel, "hreshdag," has the same meaning. In other words, they are God's servants who carry out His orders. Angels are represented throughout the Bible as a class of spiritual beings, intermediate between God and men. It is commonly accepted that there are nine orders or classes of Angels. The degree of their closeness to God and the character of their function, serve as the basis for their classification into different orders. It is an established belief that all Christians, at least all children, have their Guardian Angels. "See that you despise not one of these little ones," said Christ, "for I say to you that their angels in heaven always see the face of my Father who is in heaven" (Matt. 18: 10). The function of these guardian Angels is to lead us, if we so wish, to the Kingdom of Heaven. I said, "If we so wish," because our guardian Angels can act upon our senses and upon our imagination, but never against our will; it is up to us to put our will into action. There are two or three angels who are mentioned by name in the Bible; Gabriel is one of them. His name means "fortitude of God." Gabriel is

first mentioned in the book of Daniel, where he gives the explanations of certain visions which the prophet Daniel had seen (Dan. 8: 16). Gabriel appears under his own name twice in the New Testament, first to Zachary, father of St. John the Baptist, announcing the birth of a child to him (Luke 1: 19), and second to Mary, mother of Jesus, announcing the birth of Christ (Luke 1: 26). "I am Gabriel who stands before God," said he about himself. From this reference some have been led to believe that this Angel belongs to the highest rank. The next Archangel mentioned by name is Michael, which means "who is like God?" According to a tradition, "who is like God?" was the war-cry of the good angels who fought against those angels who had rebelled against the authority of God. As the leader of rebellious angels boastfully identified himself with God the Almighty, the loyal angels used to cry, "who is like God?" This war-cry was given as a proper name to the leader of the good angels, St. Michael. He also is mentioned in the Book of Daniel as the assistant and colleague of Gabriel, as "one of the chief princes" in heaven (Dan. 10: 13). He is also mentioned in the Epistle of St. Jude (1: 19) and in the Book of Revelation of St. John, as the champion of the Church against the powers of evil (Rev. 12: 7). In Christian art St. Michael is represented as an angelic warrior fully armed with helmet, sword, and shield, standing over a dragon with his lance pierced through the monster. On other occasions he holds a pair of scales in which he weighs the souls of the departed, showing that he has a function in the last judgment of souls. Besides the two individual Archangels, the names of two groups of angels are also mentioned in the Bible. The first are Seraphim; these are a special class of attendants of God's heavenly court. These angelic beings are distinctly mentioned only in the book of the Prophet Isaiah. While he, Isaiah, stood in the Temple, he saw the presence of God on the Throne of His Glory. On each side of the Throne stood mysterious guardians, each supplied with six wings: two of these wings were for holding them up, two for veiling their faces, and two for covering their feet in the majestic presence of the Almighty. They are the closest servants of God, standing near His Throne and ministering to Him and proclaiming His Glory, each calling to the other, "Holy, Holy, Holy is the Lord of Hosts, the whole earth is full of His Glory" (Isaiah 6: 3). The other class of heavenly beings that are frequently mentioned in the Bible is Cherubim. They are supposed to be the heavenly throne bearers of God. That is why we see this sentence frequently used for God, "who sittest upon Cherubim."

Angels, like Saints, were held in the greatest veneration in the Christian Church. Churches have been dedicated to the names of angels. God is praised and thanked for the favor of this angelic protection. Belief in Angels is in full keeping with our deepest and holiest feelings. Angels Day, therefore, is a day when we remember our better and higher friends, who are willing to assist us in our fight against the temptations of our common adversary, the Devil. It is a day in which we must cultivate in ourselves the angelic virtues of faithfulness to God, holiness of heart and purity of mind and soul. It is a day to invoke angelic assistance in carrying our prayers before the Throne of the Almighty. Finally, it is a day in which we praise the most Holy Name of God, saying in unison with the angels: "Holy, Holy, Holy is the Lord of Hosts: Heaven and earth are full of Thy glory. Blessing in the Highest. Amen."





Սիրելի հաւատացեալներ,

Անոնք որոնք կը փափաքին, որ
Հոգեւոր հովիւը այցելութիւն կատարէ
իրենց հիւանդ ընտանեկան պարագաներուն կամ
հարազատներուն, Եկեղեցոյ Հովիւը՝

Արժ. Տ. Եղիա Ա. Քինյ. Քերվանճեան պատրաստէ
անմիջականօրէն իր այցելութեամբ ընդառաջելու
ձեր փափաքին:

Հաճեցէք կապ պահել՝ Տէր Հօր հետ
հեռաձայնելով՝ (514) 241-9347 կամ
Եկեղեցոյ գրասենեակ (514) 279-3066



FAMILY PRAYER

*God made us a family
We need one another
We love one another
We forgive one another
We work together
We play together
We worship together
Together we use God's word
Together we grow in Christ
Together we love all men
Together we serve our God
Together we hope for Heaven
These are our hopes and ideals
Help us to attain them,
O God, Through Jesus Christ
our Lord*

Dear
Parishioners,
If you have
family

members or relatives that you wish to have
spiritual support, our Pastor Arch. Fr.
Yeghia Kervanjan is ready to fulfill your
wish and visit them, when and where is
needed. Please feel free to contact Der
Yeghia directly at (514) 241-9347
or call the secretariat of the Church at (514)
279-3066



ՏՆՕՐՅՆԷՔԻ ԱԻԱՆԴՈՅԹՆ ՈՒ ՍՈՎՈՐՈՅԹԸ

Տնօրինեք փափաքող
հաւատացեալները
կրնան հեռաձայնել **Տ.
Եղիա Ա. Քհնյ.**
Քերվանճեանին՝
(514) 241-9347 կամ
Եկեղեցւոյ գրասենեակ՝
(514) 279-3066



The Tradition of Home Blessing

The home is blessed for dedication or rededication, a reminder that the home reflects the Kingdom of God. Traditional times of the year for Armenian homes to be blessed are Eastertide (the 50 days following Easter), Christmastide (until February 14, the Feast of the Presentation), and after having moved into a new home.

At a Home Blessing, every member of the family assembles with the priest to sanctify together three life-giving gifts: bread, water, and salt. It is a custom for the priest to bring with him a *nushkhar* as a symbol of the presence of God's blessing.

To request a Home Blessing, please contact with Fr. Yeghia
at (514) 241- 9347 or church office at (514) 279-3066.



ՇՆՈՐՀԱԲՈՐԱՆՔ

Ս. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ
Հովիւն ու Ծխական Խորհուրդը

ԱԼԻՎԻԱ ՆՈՐԱ ԹՈՒՄԱՆՃԵԱՆ

Սկրտութեան օրհնաբեր եւ ուրախ առիթով
իրենց խորին շնորհաւորանքը կը յղեն մկրտեալի ծնողներուն
եւ բոլոր հարազատներուն, աղօթելով առ Աստուած,

որ փոքրիկն **ԱԼԻՎԻԱ ՆՈՐԱ ԹՈՒՄԱՆՃԵԱՆ**

Ս. Սկրտութեան աւագանէն իր վերստին ծնունդով արժանանայ
Աստուածային Օրհնութեան
իւր կեանքի ամբողջ տեւողութեան:



CONGRATUALTIONS ON THE BAPTISMAL CEREMONY

The Pastor & the Parish Council
of St-Gregory the Illuminator Armenian Cathedral
On the Baptismal ceremony
of the child

ALIVIA NORA TOHMANCIYAN

Extend their heartfelt congratulations
to the child parents & family.



ՇՆՈՐՀԱԲՈՐԱՆՔ

Ս. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ
Հովիւն ու Ծխական Խորհուրդը

ՎԱՅՔ ԹԱՆԱՇԵԱՆԻ

Սկրտութեան օրհնաբեր եւ ուրախ առիթով
հրեւց խորին շնորհաւորանքը կը յղեն մկրտեալի ծնողներուն
եւ բոլոր հարազատներուն, աղօթելով առ Աստուած,

որ փոքրիկն **ՎԱՅՔ ԹԱՆԱՇԵԱՆ**

Ս. Սկրտութեան աւագանէն իր վերստին ծնունդով արժանանայ
Աստուածային Օրհնութեան
իւր կեանքի ամբողջ տեւողութեան:



CONGRATULATIONS ON THE BAPTISMAL CEREMONY

The Pastor & the Parish Council
of St-Gregory the Illuminator Armenian Cathedral
On the Baptismal ceremony
of the child

VAYK TANACHIAN

Extend their heartfelt congratulations
to the child parents & family.





ՇՆՈՐՀԱԻՐԱՆՔ

Ս. ՊՍԱԿԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ
Հովիւն ու Ծխական Խորհուրդը

ՀԱՅ ԲԱՅՆԱՔԵԱՆԻ

ԵՆ

ԷՎ ՏՐՕԼԵԹԻ

Պսակադրութեան ուրախ առիթով
իրենց խորին շնորհաւորանքը կը յղեն պսակադրեալ զոյգի
Ծնողներուն եւ հարազատներուն, մաղթելով որ Աստուածային Օրհնութեան
արժանանան իրենց կեանքի ամբողջ տեւողութեան:



CONGRATUALTIONS

ON THE WEDDING CEREMONY

The Pastor & The Parish Council

Of the St-Gregory the Illuminator Armenian Cathedral

On the Wedding Ceremony

Of

HY PAILAKIAN

&

EVE DROLET

*Extend their heartfelt congratulations to their parents and family,
wishing them to receive
God blessing throughout their life.*

ՇՆՈՐՀԱԴՈՐԱՆՔ

Ս. ՊՍԱԿԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ
Հովիւն ու Ծխական Խորհուրդը

ԱՐԷՆ ՀՐԱՆԴ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

ԵՆ

ՄԱՏԼԷՆ ԺԵՆԷՍԹԻ

Պսակադրութեան ուրախ առիթով
իրենց խորին շնորհաւորանքը կը յղեն պսակադրեալ զոյգի
Ծնողներուն եւ հարազատներուն, մաղթելով որ Աստուածային Օրհնութեան
արժանանան իրենց կեանքի ամբողջ տեւողութեան:



CONGRATUALTIONS

ON THE WEDDING CEREMONY

The Pastor & The Parish Council

Of the St-Gregory the Illuminator Armenian Cathedral

On the Wedding Ceremony

Of

AREN HRANT MANOUKIAN

&

MADELEINE GENEST

*Extend their heartfelt congratulations to their parents and family,
wishing them to receive
God blessing throughout their life.*





Աստուածաշունչի Սերտողութիւն

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ մէջ



Եկե՛ք միացէք մեզի ամէն
Յինգզաբթի երեկոյեան ժամը
7:00-ին, մասնակից ըլլալու մեր
հետաքրքրական
Աստուածաշունչի նիւթերուն
Եւ ընկերային միջավայրին:

Աստուածաշունչի սերտողութեան
խումբը՝ ընկերային ջերմ
մթնոլորտի մէջ հաճելի ժամանակ
կ'անցնէ, Տ. Եղիա Ա. Բնկ.
Քերվանճեանի՝ բժախնդրօրէն
պատրաստած
Աստուածաշնչական նիւթերու
հետաքրքրական ճոխ
գիտելիքներով:





**Ուշադրութիւն մեր սիրելի հաւատացեալներուն,
Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի կամ e-mail-ի փոփոխութիւն,
հաճեցէք ձեր նոր տուեալները փոխանցել Եկեղեցւոյ
քարտուղարութեան (514) 279-3066, մեր
հաղորդակցութիւնները կարենալ պահելու համար
կանոնաւոր, շարունակական եւ այժմեական ընթացքի մէջ:
Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:**

Հովիւ եւ Ծխական Խորհուրդ



**Attention to our beloved parishioners,
If you have changes in your address, e-mail or phone numbers
please feel free to convey your new data to the Church office at
(514) 279-3066, to maintain our communication in a regular,
continuous, and up-to-date course.
Thank you for your cooperation.**

Pastor and Parish Council



Եկեղեցւոյ Տաղաւար Տօներ եւ Յառաջիկայ Ձեռնարկներ

Խաչվերաց – Կիրակի, 17 Սեպտեմբեր 2017

Տարեկան Պազար – Շաբաթ եւ Կիրակի – Հոկտեմբեր 28 եւ 29, 2017

Մանուկներու Ս. Ծնունդ / CFFA – Կիրակի, 3 Դեկտեմբեր 2017

Եկեղեցւոյ Գնման եւ Օծման 47-րդ Տարեդարձ –

Կիրակի, 10 Դեկտեմբեր 2017

FEAST DAYS AND UPCOMING EVENTS

Feast of the Exaltation of the Holy Cross –

Sunday, Sept. 17th, 2017

Annual Bazaar – Saturday & Sunday-

October 28 & 29, 2017

Children's Christmas /CFFA –

Sunday, December 3rd, 2017

Church 47th Anniversary –

Sunday, December 10th, 2017




ԳՐԱԻՈՒԱԾ ԹՈՒԱԿԱՆ
ԿԻՐԱԿԻ, 26 Նոյեմբեր 2017
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԵԼՈՅԹ

Մանրամասնութիւնները յաջորդիւ
Հաճեցէք չխաչաձեւել

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE
REPOSE OF SOUL

ԿԻՐԱԿԻ, 10 Սեպտեմբեր 2017

Օրդ. Շուշան Արոյեանի,
Տ. եւ Տիկ. Արա Միհրան եւ Ռօզ Մերի Արոյեանի
եւ զաւակներուն՝ Սօֆիայի եւ Քրիսթոֆըր Ներսէսի,
Տ. եւ Տիկ. Վարուժ եւ Սիլվիա Կիւրիւնլեանի
եւ զաւակներուն՝ Քրիսթոֆըրի եւ Քրիսթինի,
Տ. եւ Տիկ. Օլիվըր եւ Լիսա Փօլի եւ ընտանիքին,
եւ համայն Մարգարեան, Տիգրանեան,
Պուրսալեան եւ Արոյեան ընտանիքներու,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն
իրենց սիրեցեալ մօր, մեծ մօր, քրոջ եւ հարազատին՝

ՍԻՐԱՆՈՒՇ

ՄԱՂԱՔԵԱՆ-ԱՐՈՅԵԱՆԻ

(SIRANOUCHE MAGHAKIAN-AROYAN)

Մահուան 40-ին առիթով



Տիկ. Պերճուհի Սեօզքէսի,
Տիկ. Յենիքա Սեօզքէսի,
Տիկ. Սրբուհի Սեօզքէսի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն
իրենց սիրեցեալ հարազատներուն՝

ՆԵՐՍԷՍ ՊՈՅԱԾԵԱՆԻ

(NERSES BOYADJIAN)

ԱՐՄԵՆՈՒՅԻ ՊՈՅԱԾԵԱՆԻ

(ARMENUHI BOYADJIAN)

ԵԵՍԹԵՐ ՊՈՅԱԾԵԱՆԻ

(YESTER BOYADJIAN)

ՆՈՒԱՐԴ ՔԻԼՏԻԻՊԷՔԵԱՆԻ

(NEVART KUNDUBEKIAN)

ԵՒ

ՀԱՅԿԱՆՈՒՅՇ ՔԻԼՏԻԻՊԷՔԵԱՆԻ

(HAYGANUS KUNDUBEKIAN)

Հոգիներուն ի հանգիստ



Օրդ. Թագուհի Աղազարեանի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն
կը խնդրէ իր սիրեցեալ ծնողաց՝

ԿԻՐԱԿՈՍ ԱՂԱԶԱՐԵԱՆԻ

(GIRAGOS AGHAZARIAN)

ԱՐՈՒՍԵԱԿ ԱՂԱԶԱՐԵԱՆԻ

(AROUSIAG AGHAZARIAN)

Մահուան 10-րդ տարելիցին առիթով

ԵՒ

իր սիրեցեալ եղբայրներուն՝

ՅՈԿՅԱՆՆԷՍ ԵՒ ԾԷՔ ԱՂԱԶԱՐԵԱՆՆԵՐՈՒ

(HOVHANNES & JACK AGHAZARIAN)

Ինչպես նաև՝

ՆՈՒՊԱՐ ԱՂԱԶԱՐԵԱՆԻ

(NOUBAR AGHAZARIAN)

Մահուան 3-րդ տարելիցին առիթով

ԵՒ

ԲՐՇ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՍՐԿ. ԱՂԱԶԱՐԵԱՆԻ

(DN. HAMPARTZOUM AGHAZARIAN)

Մահուան 4-րդ տարելիցին առիթով



Տ. եւ Տիկ. Ղազար եւ Յասմիկ ՄԷթի եւ զաւակներուն,
Տ. եւ Տիկ. Գրիգոր եւ Երանուհի Ասլանի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն
իրենց սիրեցեալ մօր եւ մեծ մօր՝

ԱՆՆԱ ՄԷԹԻ

(ANNA MET)

Մահուան 15-րդ տարելիցին առիթով



ՆՈՒԻՐԱՏՈՒՆԻԹԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

DON
À L'ÉGLISE



DONATION
FOR THE CHURCH

Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal

***Donations of August 2017
have been received with great appreciation***

GENERAL CHURCH:

Mr. Manvel Markosyan, Mr. & Mrs. Hovsep Doramajian \$50.

HOKEHANKISD:

THE LATE ANGALADIAN FAMILY

Dr. & Mrs. Hrair & Manoush Derkevorkian \$100.





**Ս. Գրիգոր Լուսաւորիչ
Առաջնորդանիստ Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral**

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

6-12 տարեկան երեխաներու համար

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ

Կիրակի, 10 Սեպտեմբեր 2017

SUNDAY SCHOOL

On Sunday, September 10, 2017

For the ages of 6-12 years old children

Երեխաները հաճելի եւ ընկերային մթնոլորտի մեջ կը սորվին Սաղմոսներ եւ երգեր, կը զարգացնեն Հայերէն լեզուն եւ կը ծանօթանան Հայոց Պատմութեան:

Չուարճալի եւ հետաքրքրաշարժ յաջորդական պտոյտներ

Արձանագրութեան եւ մանրամասնութեան համար հեռաձայնել՝

Եկեղեցւոյ գրասենեակ (514) 279-3066

Տէր Եղիա Ա Քհնյ. Բերվանճեանին (514) 241-9347



In a pleasant and friendly atmosphere, the children will learn Psalms & songs, develop Armenian language skills, & introduce to Armenian history.

Fun & fascinating consecutive Fieldtrips

For more information and registration call to the Church office (514) 279-3066

Archpriest Fr. Yeghia Kervanjian (514)241-9347

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008
Rev. Arch. Fr. Yeghia Kervanjian: (514)241-9347
E-Mail: secretary@saintgregory.ca, www.saintgregory.ca
Facebook : Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal




SOL

ԽԱՉՎԵՐԱՑ

FEAST OF EXALTATION OF THE HOLY CROSS

ՌԻՆՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳ

DIVINE LITURGY



Կիրակի, 17 Սեպտեմբեր 2017, ժամը 10:30-ին /
Sunday, September 17, 2017 at 10:30 am

Պատարագիչ՝

ԱՐԺ. Տ. ԵՂԻԱ Ա. ՔՉՆՅ. ՔԵՐՎԱՆՃԵԱՆ

Հոգևոր Հովիւ

Celebrant:

REV. ARCH. FR. YEGHIA KERVANJYAN

Pastor

*Ս. Պատարագ առաւօտեան ժամը 10:30-ին: Պատարագի
երգեցողութիւնը պիտի կատարէ «Կոմիտաս» Դպրաց
Դասը:*

Ղեկավար՝ Լորի Անթունեան / Choirmaster: Lori Antounian

*Երգեհոնահար՝ Կարէն Մանուչարեան / Organist: Karen
Manucharyan*

- **Յաւարտ Ս. Պատարագի նախաձեռնութեամբ՝
Ծխական Խորհուրդի Մատաղ Հարիսայի
Սպասարկութիւն**

«Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ:

- **«After the Divine Liturgy Harissa will be served in the
“Vatche Hovsepian” hall of the church, organized by
Parish Council.**

Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

ՊԱՐԱՆՑԻԿ ԵՐԵԿՈՅ

Kef Night

Շաբաթ, 30 Սեպտեմբեր 2017,
երեկ. ժամը 8:00-ին - «Մարի Մանուկեան» սրահին մեջ

Saturday, September 30th, 2017
at 8:00 pm - In the «Mary Manoogian» Hall



Հանրածանօթ Երգիչ
**Րաֆֆի
Նորշահեան**
Music by special guest
**Raffi
Norshahian**

Ճոխ Երաժշտութիւն • Պար • Ճաշկերոյթ

Րաֆֆին ելոյթ կ'ունենայ այլազան լեզուներով
(Հայերէն, Անգլերէն, Տրանսլերէն, Իտալերէն)

Հասոյթը ամբողջութեամբ պիտի յատկացուի «Կոմիտաս Երգչախումբին»
Proceeds will benefit the «Gomidas Choir»

Մանրամասնութեան եւ տեղերու ապահովման համար հաճեցէք հեռաձայնել
Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066 կամ Ատրիսէ Աղազարեանին՝ (514) 269-6575

For information and reservations, please call
the Church office at: (514) 279-3066 or Adrine Aghazarian : (514) 269-6575

Անդամներու - \$35 - Members • Ոչ-Անդամներու - \$40 - Non-Members



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի
Cathédrale Arménienne St-Grégoire l'Illuminateur
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

Կազմակերպությունը՝

ՏԻԿՆԱՆՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ



Տ Ա Ր Ե Կ Ա Ն

ՊԱՉԱՐ

Պատույ Հիւր՝

Ազնուափայլ Տիկին Սօնա Տէմիրճեան

Շաբաթ 28 եւ Կիրակի 29 Հոկտեմբեր 2017
ժամը 10:00-էն

Չեռային աշխատանքներ

Անուշեղէններու եւ խմորեղէններու վաճառք
Երկու օրերուն՝ ճաշի սպասարկութիւն

Յաւելեալ մանրամասնութեան համար հեռաձայնել
Եկեղեցոյ գրասենեակ՝ (514) 279-3066 թիւին



ԴՊՐԱՑ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ

Հոգեւոր Հովիւն ու Դպրաց Դասի Վարչութիւնը

Կը յայտնեն թէ պիտի սկսին դպրաց պատրաստութեան
Հանդիպումները

Այն պատանիներն ու երիտասարդները,
որոնք կը փափաքին ծառայել
Հայց. Առաք. Եկեղեցւոյ Սուրբ Խորանին եւ մաս կազմել
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Դպրաց Դասին կը
խնդրենք

հեռաձայնել՝ Եկեղեցւոյ Հովիւին (514) 241 -9347

Կամ Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514)279-3066:

Հոգեւոր Հովիւ

Տէր Եղիա Ա Քինյ. Քերվանճեան

ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008

Rev, Arch. Fr. Yeghia Kervanjan: (514) 241-9347

E-Mail: secretary@saintgregory.ca, www.saintgregory.ca

Facebook : Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի



ԽՈԿՈՒՄ ԵՒ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Սիրելի հաւատացեալներ, ԽՈԿՄԱՆ, ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ
ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆԸ արդէն իսկ տեղի
կ'ունենան ամեն Զինգշաբթի երեկոյեան ժամը 7:00-ին,
Մոնթրէալի Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ
Եկեղեցւոյ մէջ:

Կը հրաւիրենք մեր հաւատացեալները մասնակցելու այս
հոգեպարար արարողութեան եւ սերտողութեան, որուն
ընթացքին միասնաբար պիտի փորձենք ճանչնալ Սուրբ
Գիրքը, Եկեղեցւոյ հաւատքն ու առաքելութիւնը, մեր դերն
ու մասնակցութիւնը Եկեղեցւոյ կեանքին մէջ եւ
վերջապէս պատասխան գտնել մեզ յուզող
հարցումներուն ու մտահոգութիւններուն:
Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին ներկայութիւնը:

Աղօթարար՝

S. Եղիա Ա Քհնյ. Բերվանճեան


615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066
Rev. Arch. Fr. Yeghia Kervanjan: (514) 241-9347

ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՐԻ

Միքելի Հաատացեալներ, Հաճոյքով կը տեղեկացնենք Ձեզ, որ յետայսու, ամէն Կիրակի, Ձեր ինքնաշարժները կրնաք կանգնեցնել Bernard փողոցին վրայ գտնուող Ecole Outremont-ի parking-ին մէջ, սկսեալ առաւօտեան ժամը 10:00-էն մինչեւ կ.ե. ժամը 3:00:

CAR'S PARKING

Dear Parishioners, We would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the Ecole Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm.



- From our Church turn right on Bernard street, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. Go all the way to the "centre d'éducation". The parking space is on your right.